ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ԱՊՕՐԻՆԻ ԾԱԳՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԳՈՒՅՔԻ ԲՌՆԱԳԱՆՁՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 17. Շահագրգիռ անձանց ծանուցելու կարգը

1. Իրավասու մարմինը պարտավոր է սույն հոդվածով նախատեսված կարգով ծանուցել ուսումնասիրության նյութերով հայտնի բոլոր շահագրգիռ անձանց: Սույն հոդվածով նախատեսված կարգով չծանուցված շահագրգիռ անձինք կարող են մինչև առաջին ատյանի դատարանում գործի հարուցումն օգտվել իրենց իրավունքներից՝ սույն օրենքի 16-րդ հոդվածով նախատեսված կարգով և ժամկետներում՝ սկսած այն պահից, երբ իմացել են կամ կարող էին իմանալ ուսումնասիրության առկայության մասին:

2. Շահագրգիռ անձանց ուղարկվում է պատվիրված նամակ՝ հանձնման մասին ծանուցմամբ, որը պետք է պարունակի տվյալներ հրավիրող մարմնի և հասցեատիրոջ վերաբերյալ, այն հանգամանքների վերաբերյալ, որոնք իրավասու մարմնին հիմք են տալիս ենթադրելու, որ ուսումնասիրված գույքի բռնագանձումը կարող է ազդել հրավիրվող անձի իրավունքների կամ պարտականությունների վրա, գործի նյութերին ծանոթանալու, հայտարարագիր, դիրքորոշում ներկայացնելու իրավունքի և դրա իրացման եղանակների և ժամկետների վերաբերյալ:

3. Պատվիրված նամակն իրավասու մարմինն ուղարկում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 95-րդ հոդվածի ~~2-4-րդ մասերով նախատեսված~~ կանոնների կիրառմամբ:

4. Անհրաժեշտ տվյալների առկայության դեպքում իրավասու մարմինը շահագրգիռ անձանց ծանուցում է նաև էլեկտրոնային հաղորդակցության միջոցով՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 97-րդ հոդվածով նախատեսված կանոնների կիրառմամբ:

4.1. Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին ծանուցումը կատարվում է «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» օրենքի 11-րդ հոդվածով սահմանված կարգով:

5. Սույն հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով նախատեսված միջոցների ձեռնարկմանը զուգահեռ իրավասու մարմինը Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում տեղադրում է ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի առկայության և դրա շրջանակներում ներառված գույքի վերաբերյալ տվյալներ՝ հրավիրելով շահագրգիռ անձանց ծանոթանալու գործի նյութերին և ներկայացնելու իրենց դիրքորոշումը:

6. Շահագրգիռ անձինք համարվում են ծանուցված ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի առկայության մասին սույն հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով նախատեսված կարգով ուղարկված ծանուցագիրն ստանալու պահից, իսկ ստացման մասին տվյալների բացակայության դեպքում՝ սույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված հայտարարության տեղադրման պահից՝ մեկ ամիս հետո:

(17-րդ հոդվածը փոփ. 09.06.22 ՀՕ-270-Ն)

(09.06.22 ՀՕ-270-Ն օրենքն ունի անցումային դրույթ)